ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/14/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 17 հունվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի հունվարի 17-ին քննելով ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու անդամ Արտակ Անդրանիկի Շաբոյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/14/2025 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետով սահմանված լիազորությունների իրականացման ընթացքում պարզել է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը 1,000,000 ՀՀ

դրամի չափով նվիրատվություն կատարած անձ Արտակ Շաբոյանը հանդիսանում է «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձ:

1.2 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, իրականացրել է ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու անդամ Արտակ Անդրանիկի Շաբոյանի 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) ստուգում, որի արդյունքում պարզել է, որ Արտակ Անդրանիկի Շաբոյանը Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնի «Գ.1.1.Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում հայտարարագրել է 3,000,000 ՀՀ դրամի չափով ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտ, մինչդեռ, Արտակ Շաբոյանի կողմից Կուսակցության տարեկան հաշվետվությամբ ներկայացված 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով կուսակցությանը նվիրատվություն կատարելն առերևույթ չի հիմնավորվել Արտակ Շաբոյանի կողմից հայտարարագրված տվյալներով:

1.3 Հանձնաժողովը, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ զանցանքի հիմքով 2024 թվականի նոյեմբերի 25-ին Արտակ Անդրանիկի Շաբոյանին հասցեագրել է թիվ 01/3748-2024 ծանուցումը՝ այն ստանալուց հետո՝ 5-րդ աշխատանքային օրը, ժամը՝ 11:00-ին հրավիրելով Հանձնաժողով՝ մասնակցելու վերոնշյալ առերևույթ խախտման վերաբերյալ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը: Նշված ծանուցումը Արտակ Անդրանիկի Շաբոյանի կողմից ստացվել է 2024 թվականի նոյեմբերի 30-ին:

1.4 2024 թվականի դեկտեմբերի 6-ին պատշաճ ծանուցված Արտակ Անդրանիկի Շաբոյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/745/24 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.5 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունվարի 8-ի թիվ 01/17-2025 գրությամբ Արտակ Անդրանիկի Շաբոյանին է ուղարկվել 2025 թվականի հունվարի 17-ին ժամը՝ 14:30-ին նշանակված, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական

իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր: Նշված ծանուցումը վերջինիս կողմից ստացվել է 2025 թվականի հունվարի 14-ին:

1.6 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արտակ Անդրանիկի Շաբոյանի բացակայությամբ 2025 թվականի հունվարի 17-ին՝ ժամը՝ 14:30-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2.1 Արտակ Շաբոյանի կողմից 2024 թվականի նոյեմբերի 22-ին Հանձնաժողով ներկայացված գրավոր բացատրության համաձայն՝ վերջինս Հայտարարագրում թյուրիմացաբար չի լրացրել իր եկամուտների վերաբերյալ որոշ տվյալներ: Պատճառաբանել է, որ տեղյակ չի եղել հայտարարագրի լրացման կարգին և չի իմացել, որ այդ եկամուտների վերաբերյալ տվյալները պետք է լրացվեին Հայտարարագրի «Գ.1.Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնի «Գ.1.1.Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում: Մասնավորապես նշել է, որ իր կողմից հայտարարագրված հողամասերի մշակման արդյունքում ստացել է բնամթերային եկամուտ՝ 800,000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև համայնքում կատարել է տարաբնույթ աշխատանքներ շինարարության և գյուղատնտեսության ոլորտներում՝ առանց պայմանագրային հարաբերությունների, որի դիմաց 2023 թվականի ընթացքում ստացել է 2,400,000 ՀՀ դրամի չափով եկամուտ, որոնք չի հայտարարագրել:

2.2 Արտակ Շաբոյանի կողմից 2025 թվականի հունվարի 17-ին թիվ N196 գրությամբ Հանձնաժողովին է ներկայացվել ՀՀ Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի Սառնաղբյուր բնակավայրի վարչական ղեկավարի Պ/Կ կողմից տրված տեղեկանք, որի համաձայն Արտակ Անդրանիկի Շաբոյանը բնակվում է [redacted] հասցեում և զբաղվում է հողագործությամբ, մշակում է [redacted] հա վարելահողերը և [redacted] տնամերձ հողամասը:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/14/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Արտակ Անդրանիկի Շաբոյանը Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնի «Գ.1.1.Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում ներկայացրել է 3,000,000 ՀՀ դրամի չափով ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամտի վերաբերյալ տվյալներ, մինչդեռ, ըստ վարույթի ընթացքում ձեռքբերված տվյալների՝ վերջինս 2023 թվականի ընթացքում, բացի նշված 3,000,000 ՀՀ դրամից, ստացել է ևս 3,200,000 ՀՀ դրամի չափով եկամուտ՝ գյուղատնտեսական և շինարարական գործունեությունից:

3.2 ՀՀ Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի Սառնաղբյուր բնակավայրի վարչական ղեկավարի Պ/Կ կողմից տրված N196 տեղեկանքի համաձայն՝ Արտակ Շաբոյանը բնակվում է [redacted] հասցեում, զբաղվում է հողագործությամբ, և մշակում է [redacted] հա, [redacted] հա, [redacted] հա, [redacted] հա կադաստրային ծածկագրերով հողամասերը և [redacted] կադաստրային ծածկագրով [redacted] հա տնամերձ հողամասը: Այսպիսով, Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ, այն է՝ Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնի «Գ.1.1.Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում Արտակ Շաբոյանի կողմից 6,200,000 ՀՀ դրամի փոխարեն ներկայացվել է 3,000,000 ՀՀ դրամ եկամտի վերաբերյալ տվյալ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու անդամ Արտակ Անդրանիկի Շաբոյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված

կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 41-րդ հոդվածի (Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված եկամուտները և դրանց ստացման աղբյուրները: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ **եկամուտները՝** *աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները,*(…) *ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը,* (…):

4.3 Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար:

4.4 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.8 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.10 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները: Հայտարարատուն

հնարավորություն ունի ընտրել եկամուտների դեպքում՝ եկամտի տեսակը, եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը, եկամուտ վճարողի հասցեն, հայտարարատուի և եկամուտ վճարողի միջև առկա կապի բնույթը, ստացված եկամտի գումարը և արժույթը և բնամթերային ձևով ստացված եկամուտը:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում, հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող ***հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:***

Սույն գործով ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու անդամ Արտակ Անդրանիկի Շաբոյանը Հայտարարագրում ***անզգուշությամբ*** ներկայացրել է հետևյալ ոչ ամբողջական տվյալները.

Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնի «Գ.1.1.Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում հայտարարագրել է 3,000,000 ՀՀ դրամի չափով ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտ, մինչդեռ, հաշվետու ժամանակաշրջանում ձեռնարկատիրական և շինարարական գործունեությունից վերջինիս ստացված եկամուտը կազմել է 6,200,000 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով արձանագրված իրավախախտման նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները՝ սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Արտակ Անդրանիկի Շաբոյանը Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալ, որի արդյունքում թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարք (հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը):

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել՝ արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ, մասնավորապես.

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով էական հանգամանք է այն, որ Արտակ Անդրանիկի Շաբոյանի կողմից բնամթերային եկամուտից և շինարարության, գյուղատնտեսության ոլորտներում կատարած աշխատանքից ստացված 3,200,000 ՀՀ դրամի չափով եկամուտների վերաբերյալ տվյալները բացակայում են վերջինիս կողմից ներկայացված Հայտարարագրի «Գ.1. Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ իր կողմից նախորդիվ կայացրած որոշումներով (Հանձնաժողովի՝ 2021 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԻՎ/08/2021, 2021 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԻՎ/11/2021 որոշումներ) ոչ ամբողջական տվյալների հայտարարագրման հետ կապված նվազ նշանակության են որակվել այն դեպքերը, երբ

պաշտոնատար անձի չհայտարարագրած եկամուտը չի գերազանցել նրա պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձը: Էական է գնահատվել նաև այն, որ հայտարարատու պաշտոնատար անձի եկամուտը ստացվել է մեկ աղբյուրից:

Հանձնաժողովի կողմից նախորդիվ կայացրած այլ որոշումներով (Հանձնաժողովի՝ 2022 թվականի մայիսի 26-ի թիվ ՎԻՎ/21/2022, ՎԻՎ/22/2022, 2022 թվականի մայիսի 31-ի ՎԻՎ/26/2022 որոշումներ) ոչ ամբողջական տվյալների հայտարարագրման հետ կապված նվազ նշանակության են որակվել այն դեպքերը, երբ պաշտոնատար անձի չհայտարարագրված եկամտի վերաբերյալ տվյալների վերաբերյալ ամբողջ և անհրաժեշտ ծավալի տեղեկությունն արդեն իսկ տրամադրվել է պաշտոնատար անձի կողմից նույն հայտարարագրի մեկ այլ բաժնում:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով խախտումը կատարվել է այնպիսի փաստական հանգամանքների համադրությամբ, որոնք նույնական չեն նախորդող վարչական ակտերում առկա փաստական հանգամանքների հետ: Մասնավորապես, սույն դեպքում Հանձնաժողովն էական է համարում այն հանգամանքը, որ եկամուտների ոչ ամբողջական հայտարարագրման հետևանքով չի բացահայտվել վերջինիս կողմից 3,200,000 ՀՀ դրամի չափով չհայտարարագրված եկամուտների վերաբերյալ հայտարարագրման ենթակա մի շարք տվյալներ, մասնավորապես՝ նշված եկամուտների աղբյուրների, եկամուտ վճարող կազմակերպության կամ ֆիզիկական անձի, վերջինիս հասցեի, ինչպես նաև եկամուտների հայտարարագրմանն առնչվող օրենսդրությամբ սահմանված պարտադիր լրացման ենթակա այլ տվյալներ: Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 41-րդ հոդվածի (Եկամուտների հայտարարագրի բովանդակությունը սահմանող) 1-ին մասով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ հայտարարագրում պետք է ներառվեն հաշվետու տարվա ընթացքում ***ստացված բոլոր եկամուտները և դրանց ստացման աղբյուրները***: Մինչդեռ, տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ ստացված եկամուտների վերաբերյալ տվյալները ոչ ամբողջական են ներկայացվել Արտակ Անդրանիկի Շաբոյանի եկամուտների Հայտարարագրում:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս

ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (***փուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով***), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արտակ Անդրանիկի Շաբոյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ **200,000** (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական **900005001335** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Անդրանիկի Շաբոյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Արտակ Անդրանիկի Շաբոյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ